ԱՐԱՐԱՏ

ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

horizon | HÉBDOMADAIRE ARMÉNIEN – Supplément en français | ARMENIAN WEEKLY – English supplement

VOL. 42 / No.6-7 (2140-2141), 8+4+4+4 Էջ / $1.75

ՅՈՒԼԻՍ 6-13 / 6-13 JUILLET /6-13 JULY 2020

KOMITAS
SALON FUNÉRAIRE
«Nous reconnaissons que chaque famille est unique»
514.331.0400 · komitas.ca

ՀՅԴ Հայաստանի ԳՄ յայտարարութիւնը

Սահմանադրական փոփոխութիւնների արագընթաց եւ անպատասխանատու կերպով Ազգային ժողովում ներկայացումը, քննարկումն ու ընդունումը փաստում են, որ.

1.– օրուայ քաղաքական իշխանութիւնը հետեւողականօրէն արհամարհում է երկրի Մայր օրէնքն եւ, ելնելով անձնական ու քաղաքական շահախնդրութիւնից, իրականացնում է կամակատար դատարան ունենալու ցանկութիւնը,

2.– օգտուելով երկիրը համակած կորոնավիրուսի յաղթահարման պատրուակով յայտարարուած արտակարգ դրութիւնից, քաղաքական իշխանութիւնը անթաքոյց կերպով կայացնում է Սահմանադրութեան իրար հաւասարակշռող երեք ճիւղերից մէկի՝ դատական համակարգի առանցքային դերակատարութիւն ունեցող Սահմանադրական դատարանը զաւթելու որոշում, ինչը առերեւոյթ առաձնապէս ծանր յանցագործութեան տարրեր է պարունակում:

Ամօթալի եւ անթոյլատրելի հակասահմանադրական այս ընթացքը պէտք է կասեցնել: Սահմանադրութեան փոփոխութիւնների վերաբերեալ Ազգային ժողովի ընդունած հակասահմանադրական որոշումները անհրաժեշտ է քննարկման առարկայ դարձնել Սահմանադրական դատարանում: Այս առումով ողջունում ենք «Բարգաւաճ Հայաստան» խորհրդարանական խմբակցութեան դիրքորոշումն ու նախաձեռնութիւնը, յորդորում ենք «Լուսաւոր Հայաստան» խորհրդարանական խմբակցութեանը միանալ այս նախաձեռնութեանը:

Դիմում ենք հանրապետութեան նախագահին, որպէս պետութեան գլուխ, նշուած հակասահմանադրական գործընթացի վերաբերեալ արտայայտել յստակ դիքորոշում եւ ձեռնարկել անհրաժեշտ գործողութիւններ:

ՀՅԴ Հայաստանի Գերագոյն մարմին

ՀՅԴ ՀԱՅ ԴԱՏԻ ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ
Յայտարարութիւն

Վերջին շաբաթներուն աչխարհասփիւռ հայութիւնը ականատես է Թուրքիոյ կողմէ հայութեան դէմ դրսեւորուած ատելի հրահրութեան եւ թշնամական գործողութիւններու՝ Թուրքիոյ, Հարաւային Կովկասի եւ ամբողջ աչխարհին մէջ:

Այս սադրանքներէն առաւել ուշագրաւները եղան Լիբանանի մէջ արձանագրուած հրահրութիւններն ու բողոքի ցոյցերը, որոնք կազմակերպուած էին Անդարայի եւ հայ ազգին դէմ անոր ցեղասպանական մտադրութիւններուն դաշնակցած առանձին չրջանակներու կողմէ: Այս թշնամանքը ուշագրաւ ձեւով ծանուցուեցաւ նաեւ Էրտողանի կառավարութեան հրապարակային յայտարարութիւններուն ընդմէջէն, երբ դիտել տրուեցաւ, որ Թուրքիոյ Բարձրագոյն խորհրդատուական խորհուրդը հինգ ժամ տեւած նիստ մը յատկացուցած է խոչընդոտելու համար Հայոց ցեղասպանութեան ճշմարտացի, արդար եւ համապարփակ միջազգային լու-

ԴԱՏ... Շար. էջ 4

Սիրելի Հայրենակիցներ,

Մայիս 28, 2020ին, մեկնարկուեցաւ Լիբանանի հայութեան օժանդակութեան Գանատայի հանգանակային արշաւը, որով գանատահայութիւնը անգամ մը եւս իր պատրաստակամութիւնը յայտնեց ձեռք երկարելու հոն, ուրկէ կու գայ օգնութեան կանչը: Նախորդ մեր հաղորդագրութեամբ, խոստացած էինք մեր համայնքը տեղեակ պահել յաջորդ քայլերուն ու ծրագիրներուն մասին: Այսու, կը տեղեկացնենք, հետեւեալը՝

– Հինգշաբթի 9 Յուլիսի երեկոյեան ժամը 8:30-10:00ին, մասնակցինք Aid4Lebanon Թելեթոն-հանգանակութեան: Թելեթոնը պիտի սփռուի ուղիղ եթերով, հետեւեալ կայքերէն՝

http://Facebook.com/Aid4Lebanon
ICI Television

– Արդէն կը գործէ Լիբանանի Հայութեան Օժանդակութեան Մարմինի դիմատետրի էջը, ինչպէս նաեւ Instagram-ի aid4lebanon հաշիւը, ուր օրը օրին կրնաք հետեւիլ մեր աչխատանքներուն, լիբանանեան լուրերուն եւ Լիբանանի մեր կառոյցներու տարած աչխատանքներուն:

– https://acc.akaraisin.com/Aid4Lebanon նուիրատուութեան առցանց կայքէջը առժամաբար դադրած է գործելէ: Շուտով պիտի հրապարակուի առցանց նոր հասցէ, ուր կարելի պիտի ըլլայ շարունակել ձեր սրտաբուխ նուիրատուութիւններու փոխանցումը ու ստանալ տուրքէ վերծ ստացագրեր:

– Ձեր նուիրատուութիւնները կարելի է կատարել վճարագիրով գրուած C.A.M.A.M-ին եւ ուղարկել հետեւեալ հասցէին՝

C.A.M.A.M.
3401 Rue Olivar-Asselin, Montreal, QC, H4J 1L5

Այլ մանրամասնութիւններու համար հեռաձայնել՝

Մոնթրէալ (514) 887-6547, *Լաւալ* (514) 887-1890, *Օթթաուա* (819) 743-0386
Թորոնթօ (416) 315-7310, *Վանգուվըր* (778) 228-1233, *Հարաւային Օնթարիօ* (519) 241-1477

Կամ գրել aid4lebanon@armenian.ca

Կը խնդրենք մեր հայրենակիցներէն, որ այս տեղեկութիւնները տեղադրեն իրենց ընկերային ցանցերուն վրայ, որպէսզի կարելի ըլլայ օգնութեան կոչը հասանելի դարձնել ամբողջ Գանատայի տարածքին: Անյապաղ սատար հանդիսանանք Լիբանանի մեր քոյրերուն եւ եղբայրներուն:

Հանո՛ւք անոնց:

Լիբանանահայութեան Օժանդակութեան Գանատայի Մարմին

Al·Nejmah

MIDDLE EASTERN SUPERMARKET

NOW OPEN

Սեփականատէր
Յարութ Սիփան

Ընտանեկան բացառիկ գործառնութիւն ուր կը գտնէք ձեր բոլոր կարիքները ուտելիքներու վերաբերեալ

IN HOUSE

COFFEE ROASTING & GRINDING
ROASTING FRESH NUTS
SESAME GRINDING TO MAKE FRESH TAHINA
TANOOR BREAD & IRAQI SAMOON

Սուրճ աղալ եւ խարկել
Հնտեղէն աղալ օրական դրութեամբ
Շուշմայ աղալ եւ թահինի պատրաստել
Թոնիրի հաց եւ իրաքեան սոմուն

Supermarket | RestaurantI I Bakery I Halal Butcher
Վաճառատուն, ճաշարան, փուռ, մսավաճառ

PHONE: **289.232.1200**
3085 Hurontario St, Unit 1-6, Mississauga

ԻԾԽԱՆ

Ինը տարեկան էի։ Մօրաքրոջս ձեռքէն բռնած, մտանք դարպասէ մը։ Մուտքին՝ պահակի նման ծերունի մը նստեր էր եւ հանդարտ, անժպիտ, կը բարեւէր բոլորին։

Ահա՛ նոր դպրոցդ ,– ըսաւ մօրաքոյրս հպարտութեամբ։

«Դպրո՞ց, թէ՞ հանրային պարտէզ,– կը մտածէի ես. – այս ինչ լա՛յն բակ է», զարմացած կը դիտէի շուրջս, բարձր ծառերու տակ փայտէ նստարաններ, բակին մէջտեղ լայն ու կանաչ տարածութիւն, կաղնիներ ու արմաւենիներ։

Ահ՛յս էր ուրեմն այդ «ճեմարանը», որուն գովքը հիւսեր էր մեծ հայրս ամբողջ ամառը։ Շուրջս անծանօթ դէմքեր, ծնողներ, տղաք ու աղջիկներ, մեծ ու պզտիկ։

Յանկարծ հեռուէն լսեցի գանգին ձայնը, որուն յաջորդեց խելագար վազք մը, աղմուկ ու իրարանցում։ Շուտով շարքեր կազմուեցան, սուլիչը վիզէն կախած խիստ ու փայլուն դէմքով մէկը բարձրացաւ քարէ նստարանի մը վրայ ու սկսաւ անուններ կարդալ։ Ախ որքա՜ն երկար էր այդ անուանացանկը, ոտքերս կը դողային, անհամբեր կը սպասէի լսելու իմ անունը. ես ո՞ր պոչը պիտի բռնէի արդեօք։

Դասախարակներու առաջնորդութեամբ, աշակերտները դասարան առ դասարան կը հեռանային։

Բակը պարապ էր, լուռ ու հանդարտ։ Մոռցուե՞ր էի։ «Հոգս չէ,– կ'ըսէի, ինքզինքս համոզելու համար, – իմ դպրոցս, ճիշդ տանս մօտ, թէեւ հին ու նեղ, դեռ շատ կը սիրէի. իմ ընկերուհիներս ու ուսուցիչներս հոն էին»։ Բայց, մեր թաղերէն շատ հեռու այս հաստատութիւնը, ճիշդ է, որ շատ գեղեցիկ ու լայն էր, մանաւանդ այդ մէջտեղի չէնքը, կարծես ըլլար պալատ մը, իր երկու կողմերէն վեր բարձրացող աստիճաններով, բարձր սիւներով եւ լայն պատշգամներով։

–Երթա՛նք տնօրէնութեան սենեակը,– լսեցի մօրաքրոջս մտահոգ ձայնը։

Մօտեցանք պալատի նման չէնքին. «այս լայն ու փայլուն աստիճանները որքա՛ն կը յիշեցնէին Մոխրիկի (Cindrella) կախարդական աստիճաններըը», կը մտածէի ես։

–Պրն. Մուշեղ՛ը, մեր աղջկան անունը չկարդացին,– ըսաւ մօրաքոյրս։

Պրն Մուշե՛ղ, այո՛, այդ անունը լսեր էի մեծ հօրմէս, լսեր էի նաեւ, որ իշխան ալ էր։

Իշխա՞ն, մոխրի՞կ, աստիճաննե՞ր։ Կամացուկ մը բարձրացուցի աչքերս ու ի՜նչ տեսնեմ, լայն բաճկոն մը հագած, քանի մը թել անկուած մազ ճաղատ ու փայլուն գլխուն վրայ, մեծ քիթով, լայն ռունգերով մէկը կեցեր էր դիմացս։ Ո՛չ, այս մէկը մոխրիկին իշխանը չէր. այս ուրիշ իշխան մը ըլլալու էր։

– Եկո՛ւր տեսնեմ, աղջի՛կս,– ըսաւ ան. անունս ու դասարանս ստուգելէ ետք, զիս տարաւ դասարան մը։

–Ալի՛ս, այս մէկը մոռցուեր էր, քիչ մը աւելի ուշադրութիւն ըրէք, ճանը՛մ։ Պրն Մուշեղը եղաւ իմ առաջին առաջնորդս ճեմարանի մէջ։

* * *

Տարիներ ետք պրն. Մուշեղ եղաւ նաեւ իմ հայերէնի եւ գրականութեան ուսուցիչս. բայց ան սովորական ուսուցիչ մը չէր, մեր դիտցած՝ դաս, պարտականութիւն եւ նիչ տուող ուսուցիչ մը։ Պրն. Մուշեղ տարբեր էր։

Շուարած ու մտածկոտ կը մտնէր դասարան. կը կանգնէր դասարանին մէջտեղը, աչքերը պատուհանէն դուրս սեւեռած, իր՜նչ-իր՜նչ բաներ կը չարչարէին արդեօք իր գգայուն հոգիին ու բանաստեղծի միտքը։ Մենք կը ճանչնայինք իր երկու մեծ թշնամիները. առաջինը՝ այդ անպիտան պաքալորէան էր, որ կլանած էր իր աշակերտներու միտքն ու հոգին. պրն. Մուշեղի միւս մեծ թշնամին՝ երրորդ յարկի սրահի այդ յամառ ժամացոյցն էր, որ որոշած էր անպայման ետ մնալ, եւ պրն. Մուշեղ գրեթէ ամէն օր, առաւօտեան խմբական աղօթքէն առաջ, կը բարձրանար աթոռի մը վրայ, ջղայնացած, մրթմրթալով կը փորձէր շտկել ու կրթել այդ չարաճճի սլաքները, բայց անօգուտ։

Դասարանին մէջ պրն. Մուշեղ լաւ կը ճանչնար իր «յաճախորդները»։ Գիտէր ծոյլն ու չարը, թափթփածն ու շտապխօսը, եւ կատակով, սրամտութեամբ կապ կը պահէր բոլորին հետ։

Մեր դասարանի տղոցմէ ոմանք գրաբարի հոլովումներն ու խոնարհումները հռչակեր էին աղջկանց գործ, ու քանի մը աղջիկներ սիրով ստանձներ էին այդ պարտականութիւնը, ու երբ երբեմն տղաքը դժուարութիւն կ'ունենային այդ շատ հապճեպ գրուած տողերը կարդալու, պրն. Մուշեղ բարի հրեշտակի մը նման օգնութեան կը հասնէր.

– Տղա՛ս, տո՛ւր Արմինէին, իր գիրն է կարծես, թող ի՛նք կարդայ, պարապ տեղը մի՛ չարչարուիր։

Գրականութեան պահերուն պրն. Մուշեղ կարծես կը մոռնար իր հոգերն ու ինքզինքը։ Ակնոցը քիթին վրայ ինկած, գիրքը աչքերէն հեռու բռնած, վերացած ու յուզուած ան կը դառնար Սայեաթ Նովա, Թէքէեան, Վարուժան եւ կ'ապրէր որպէս սիրահար կամ հայրենակարօտ պանդուխտ։ Բայց որքա՛ն մեծ կ'ըլլար անոր զայրոյթը, երբ կը նկատէր, որ ոմանք արդէն մտիկ չէին ըներ, գիրքը կը նետէր սեղանին վրայ ու ջղայնացած կը դանգատէր.

–Տղայ, քիչ մըն ալ հո՛ս մտիկ ըրէ, տես ի՛նչ կ'ըսէ. միայն մաթեմաթիկը եւ պաքալորէան չեն, որ մարդս կ'ապրեցնեն։ Յետոյ, մանուկի մը նման նեղուած, յուսահատ, տրտնջալով կը բարձրանար ամպիոնին վրայ, կը քաշուէր սեղանին ետեւ, ճմռթկուած թաշկինակով իր մեծ քիթը սպին անդին կը հրէր, հոն կը նստէր լուռ ու մունջ։

Շարադրութեան պահերուն կամ գրական խմբակի հանդիպումներուն պրն. Մուշեղ, քիթին տակէն խնդալով, կ'աղերսէր մեր «avant-garde» գրող տղոց.

–Տղա՛ք, պա՛րզ գրեցէք, քիչ մըն ալ մեր մասին մտածեցէք, գրեցէ՛ք այնպէս, որ մե՛նք ալ բան մը հասկնանք ձեր գրածներէն։

* * *

«Քու հարազատ յարկիդ ներքեւ սիրական

Մեր կեանքն ուրախ եւ միշտ ազատ կը ծաղկի»

Ճեմարանի քայլերգը՝ Մուշեղ Իշխանի խօսքերը։

Այդպէս ալ եղաւ. Ճեմարանի յարկին տակ մենք անցուցինք ուրախ ազատ եւ շատ անուշ օրեր. ու չուտով եկաւ այդ օրը, երբ մենք արցունքոտ աչքերով կարդացինք մնաք-բարովի ուղերձները, ակնածանքով թօթուեցինք պրն. Վրացեանի ձեռքը եւ համբուրուեցանք Պրն. Մուշեղի հետ։

* * *

Այդ օրերուն, ամրան չրջանին, Ճեմարանի գրասենեակը եւ գրադարանը բաց էին հինգշաբթի օրերը։ Առաջին հինգշաբթին էր, բարձր կաղնիներու չուքին տակ հաւաքուեր էինք հին ու նոր շրջանաւարտներ. բարձրաձայն կը կատակէինք, կը քաշքշէինք գիրար ու ազագայի ծրագիրներու մասին կը խօսէինք. ուսուցիչներ, աշակերտներ, ընկերներ կ'անցնէին բարեւելով։ Հեռուէն երեւցաւ պրն. Մուշեղ, դանդաղ քայլերով մօտեցաւ մեր խումբին.

– Ի՞նչ է, նորէն հոս էք բոլորդ, կարօտցա՞ք դպրոցը,– ըսաւ եւ նկատելով մեր աղջիկներէն մի քանիին չպարուած երեսները, քմծիծաղով աւելցուց. – Փոխուեր էք աղջիկներ, մէյ մէկ հարսնցու դարձեր էք, կարծես բախտերնիդ չուտ պիտի բացուի,– յետոյ՝ իմ կողմս դառնալով հարցուց. Դուն ի՞նչ պիտի ընես եկող տարի։

– Սըրը կը կարծէ, թէ լաւ հիւանդապահուհի կրնամ ըլլալ, կրթաթոչակ ալ կրնայ ապահովել։

– Եկո՛ւր մեր քով, դուն լաւ ուսուցչուհի կ'ըլլաս,– ըսաւ ան կտրուկ չեշտով։

Այդպէս ալ եղաւ։

Վերամուտին իմ շատ յարգելի եւ սիրելի ուսուցիչներուս հետ դարձեր էի պաշտօնակից։ Պրն. Մուշեղին թեւադրութեամբ եւ քաջալերանքով հետեւեցայ մանկավարժական դասընթացներու։ Ճեմարանը մնաց իմ հարազատ տունս, իսկ պրն. Մուշեղ՝ իմ մեծ ուսուցիչս։

ՏԻՐՈՒԿ ՄԱՆՃԻԿԵԱՆ

Արեւմտեան Հայաստանի Ծպտեալ Հայեր. Ատիամանի Հայերը

Այսօր, հայ ընտանիքներու թիւը Ատիամանի մէջ կը գերազանցէ 1600-ը։ Ատիամանի Հայեր. ի՞նչն է, որ անոնց աւելի ինքնավստահ եւ ուժեղ կը դարձնէ Լրագրող Նայիրի Հոխիկեան կը չարունակէ ուսումնասիրել, թէ Արեւմտեան Հայաստանի հայկական պատմական ժառանգութենէն ի՞նչ մնացած է, որո՞նք կ'ապրին մեր հարեւանութեամբ՝ մեր պատմական հողերուն վրայ, միայն թիւրքերն ու քիւրտե՞րը, թէ՞ հայկական արմատները կը չարունակեն ծիլեր տալ... Սփուռքինք Արմենիան հրատարակած է Լրագրող Հոխիկեանի յօդուածը Ատիամանի կրօնափոխ դարձած հայերուն մասին։

Այսօրուն Թուրքիոյ տարածքին վրայ կը գտնուի առասպելական Նեմրութ լեռը։ Անոր գագաթին կառուցուած դամբարանն ու արձաններու խումբը 2120 մեթր բարձրութեան վրայ, ունին աւելի քան 2100 տարուայ պատմութիւն։ Անոնք թուագրուած են ՔԱ 69-34 թուականներով։

8 մեթր բարձրութեան վրայ գտնուող արձաններու խումբին կեդրոնը կը գտնուի Արամազդի արձանը, որուն մէկ կողմը զետեղուած են Միհր եւ Արտագնէս, իսկ միւս կողմը՝ Կոմախէնի երկրի Դիցուհիին եւ Անտիոքոս Ա.ի արձանները։ Թագաւորը պատկերուած է հայոց Տիգրան Մեծ թագաւորի թագով։

Դարերու աւերիչ ձեռքը ազդեցութիւն ունեցած է նաեւ այստեղ՝ երկրաշարժերու ու քամիներու միջոցով գլխատելով երբեմնի փառքի արձանները։ Հնագէտներն ու պատմաբանները Նեմրութի արձանները կը համարեն աշխարհի 8րդ հրաշալիքը, որ չի զիջիր ո՛չ եգիպտական բուրգերուն եւ ո՛չ ալ յունական աստուածներու ողիմպոսեան արձաններուն։

Նեմրութը Հայկական լեռնաշխարհի ամենաբարձր գագաթը չէ, բայց այստեղէն, աւելի քան պարզ կ'երեւի ամբողջ տարածաշրջանը։ Կարծես եփրատի աւազանը ընդգրկող հսկայ տարածքը ափիդ մէջ ըլլայ՝ ստիպելով դիտակցիլ, թէ ինչ երկիր է այս, ինչ հող, որուն պահպանութեան համար, հազարամեակներ չարունակ, մեր պապերը կեանք չեն խնայած։

Նեմրութ լերան ստորոտին կը գտնուին Քահթա եւ Ատիաման քաղաքները։ Այսօր, Ատիամանը ամենաշատ բացայայտ հայ բնակիչ ունեցող վայրերէն մէկն է Արեւմտեան Հայաստանի տարածքին։ 1971 թուականի պաշտօնական տուեալներով Ատիամանի մէջ կ'ապրէին 52 հայ ընտանիքներ։ Պաշտօնական տուեալներով, այսօր, հայ ընտանիքներու թիւը Ատիամանի մէջ կը գերազանցէ 1600-ը։ Այստեղ ծնած են Ֆրանսական դիմադրութեան չարժման հերոս՝ Միսաք Մանուշեանը, արցախեան ազատամարտի մասնակից՝ Սարգիս Հացապանեանը, Թուրքիոյ հեղինակաւոր երգիչներէն՝ Ստեփան Իլհան-Եփրէմեանը եւ շատ շատեր։

Ատիամանը նաեւ ցեղասպանութեան օրերուն ամենամեծ համակեդրոնացման ճամբարներէն մէկն էր, ուր կը հաւաքուէին Արեւմտեան Հայաստանի տարբեր վայրերէն գաղթի ճամբան բռնած հայերը՝ դէպի արաբական անապատներ տանելու կամ պարզապէս ոչնչացնելու նպատակով։

Այստեղ, իրենց գոյութիւնը պահպանելու համար շատ հայեր առերես թրքացած են կամ քրտացած, ընդունելով մահմետականութիւնը։ Այդպիսի հայերէն մէկն է Ատիամանի մէջ ինծի հանդիպած Նէճաթ Պաքըրճօղլուն։ Ան 2000-ականներուն ո՛չ միայն վերադարձած է քրիստոնէութեան, այլեւ՝ գործնական քայլեր ձեռնարկած է, որպէսզի Ատիամանի մէջ Առաքելական եկեղեցի կառուցուի։

«Մանուկ հասակիս, ուրիշ երեխաները մեզի հայ կ'ըսէին։ Այն ժամանակ, մենք չէինք հասկնար, թէ այդ մէկը ինչ կը նշանակէ, բայց երբ տարիներ ետք Սուրիայէն քահանայ մը եկաւ ու սկսաւ պատմել, թէ ինչ տեղի ունեցած է 1915 թուականին եւ ինչ ազգ եղած են հայերը, մենք դարձանք աւելի ինքնավստահ եւ ուժեղ։ 100 տարի է մենք կռիւ կը մղենք հայ մնալու համար։ Մեր զաւակներուն հայկական կրթութիւն կու տանք, որպէսզի չմոռնան իրենց արմատները։ Եթէ նախապէս կը լռէինք ու կը տառապէինք, այսօր չենք լռեր, չենք վախնար եւ չենք տառապիր», կը պատմէ ան։

Ատիամանցի ուրիշ հայ մը՝ Էնվէր Փօլատը բազմիցս ճնշումներու ենթարկուած է հայկական ինքնութեան մասին բարձրաձայն խօսելու պատճառով, բայց եւ այնպէս կը շարունակէ նոյն յամառութեամբ՝ միաժամանակ ցաւ ապրելով, որ իրենց նկատմամբ հակասական վերաբերմունք ունին ո՛չ միայն թուրքիոյ բնակիչները, այլեւ Հայաստանի Հանրապետութեան եւ սփիւռքի հայերը։

«Մենք այստեղ ծնած ենք որպէս հայ, սակայն մեր կամքով չէ որ չատերս իսլամ ենք։ Մենք այստեղ՝ մեր բնօրրանին մէջ, ամէն օր կ'ենթարկուինք հասարակական ու իշխանութեան ճնշման։ Նոյնիսկ յուշարկաւորութիւններու ընթացքին չրջանի իմամները յաճախ կը խուսափին մեզմէ, քալ գիտնալով, որ հայ ենք։ Բայց ի տարբերութիւն միւսներէն, մենք այստեղ սեփական հողի վրայ ենք՝ մեր հայրենիքին մէջ։ Այդ է ուժ տուողը։ Երանի մեր հայրենակիցները մեզի ընդունին այնպէս, ինչպէս որ կանք»։

Ատիամանի մէջ, տարբեր տուեալներով, բնակչութեան 15-20 տոկոսը այսօր ունի հայկական ինքնագիտակցութիւն։

Երկխօսութեան պայմանը առողջ բանականութիւնն է

Այս օրերին, երբ մեր երկիրը ներքաղաքական լարուածութեան մէջ է՝ մեր չուրջն ու մեզ հետ տեղի ունեցող իրադարձութիւնների պատճառով, ոմանք չարունակում են Դաշնակցութեան դէմ նոյն երգը երգել Ռոպերթ Քոչարեան եւ Սերժ Սարգսեան նախագահների հետ համագործակցութեան մասին։ Հրատապ նշանակութի՞ւն ունի այսօր այդ հարցը, ի հարկէ ոչ, բայց չեմ կարծում, թէ մարդիկ չգիտեն ինչ են անում։ Եթէ նման հրապարակումները պարզաբանումներ ստանալու նպատակ հետապնդէին ի հարկէ կարելի էր համապատասխան ձեւով արձագանգել դրանց, բայց երբ «մեղադրական փաստերի հիման վրայ կարդացւում են դատավճիռներ» ի հարկէ ուշադրութիւն դարձնելու կարիք չկայ, քանի որ Դաշնակցութիւնը որեւէ մէկի առաջ արդարանալու անհրաժեշտութիւն չունի։ Այնուամենայնիւ երեւոյթը պարզաբանել արժէ, անդրադառնալով ՀՅԴ-իշխանութիւններ նախորդող երկու տասնամեակների եւ դրանից էլ այն կողմ անցնող փոխյարաբերութիւնների թեմային։

Նախ, եթէ իշխանութիւնների հետ փոխյարաբերութիւնների հարցն է մէջտեղ բերւում ինչո՞ւ խնդիրը չի քննւում աւելի վաղ շրջանից, երբ Դաշնակցութիւնը նաեւ համագրել է գործողութիւնները անկախ Հայաստանի առաջին իշխանութիւնների հետ՝ արցախեան պատերազմական գործողութիւնների հարցում, կայացման շրջանում, միջազգային ատեաններում, հայկական երկու հանրապետութիւնների հետապնդած խնդիրների, ֆինանսական եւ ոչ ֆինանսական աջակցութիւնների ուղղութեամբ, օժանդակել է Հայաստանի նորաստեղծ դիւանագիտական ներկայացուցչութիւններին եւ այլն։ Սա կրկնեմ այն տարիներին, երբ Հայաստանում իշխանութիւնը հալածում էր կուսակցութեանը, իսկ ՀՅԴ-ն ընդդիմադիր կոչտ կեցուածք էր որդեգրել։

Ի դէպ, եթէ նման համագործակցութիւնը այդքան մեծ մեղք է ինչո՞ւ որեւէ քննադատութիւն չի հնչում այսօրուայ վարչապետի հասցէին, ով իր քաղաքական դաստիարակութիւնը ստացել է ՀՀՇ-ի խոհանոցում, ով եղել է Լեւոն Տէր-Պետրոսեանի դաշնակիցը 2008 թուականի ընտրութիւններում՝ առաջնորդուելով Արցախը յանձնելու պլատֆորմով։ Ինչ վերաբերում է Դաշնակցութեանը, ապա յիշեցնեմ եւս մէկ փաստ, որ դուցէ եւ դուր գայ Դաշնակցութեան վարկով խիստ մտահոգներին։ 1920 թուականի Դեկտեմբերին, իշխանութիւնը բոլշեւիկեան յեղկոմին յանձնելուց 1–2 օր անց ՀՅԴ բարձրագոյն մամինը՝ Բիւրոն շրջաբերական յղեց կուսակցութեան շարքերին, որով յայտնում էր, որ ինքը հարկադրաբար լքում է երկիրը, սակայն հազարաւոր դաշնակցականները կարող են ներգրաւուել պետական աշխատանքներում նոր իշխանութեան պայմաններում շարունակելով ծառայութիւնը հայրենիքին։

Բոլոր ժամանակներում Դաշնակցութիւնը տարբերակել է պետութիւնը իշխանութիւնից եւ երբեք չի մտահոգուել, թէ պետութեանն իր ծառայութեամբ կարող է ուղղակի կամ անուղղակի ձեւով օգտակար լինել նաեւ օրուայ իշխանութիւններին։ Դաշնակցութեան համագործակցութիւնների հարցը քննողները ինչո՞ւ չեն ցանկանում լուսաբանել նաեւ այն հարցը, որ Փաշինեանի առաջարկին ընդառաջելով Դաշնակցութիւնը դաշինք կազմեց եւ նրա հետ, իսկ այն բանից յետոյ, երբ խզուեց այդ դաշինքը ընդդիմադիր դիրքորոշում որդեգրած ՀՅԴ-ն այդուհետ էլ չարունակեց աջակցութեան առաջարկներ ներկայացնել իր կողմից քննադատուող իշխանութեանը։

Այստեղ անդրադառնանք հարցին թէ ինչո՞ւ մէկ դէպքում ստացուել է ուղղակի համագործակցութիւնը, իսկ այլ դէպքերում՝ ոչ։ Պատճառը չատ պարզ ու ակնյայտ է. ի տարբերութիւն առաջին եւ չորրորդ վարչապետների երկրորդն ու երրորդը չէին տառապում ամենագէտի, ինքնասիրահարուածի եւ անհանդուրժողի բարդոյթներով եւ պատրաստ էին լսելու դիմացինին, քննարկելու եւ համատեղ լուծումներ փնտրելու ազգային այլեւայլ հիմնահարցերի վերաբերեալ։ Մօտ քսան տարի Դաշնակցութեան ղեկավարութիւնը մշտական չփումների մէջ է եղել Հայաստանի բարձրագոյն ղեկավարութեան հետ։ Յաճախ նման քննարկումները ստացել են բանավէճերի բնոյթ, յաճախ յաջողել է ընդհանուր լուծումների յանգել, իսկ յաճախ էլ չի յաջողել։ Պատահել է նաեւ, որ տեսակէտների բեւեռացում է եղել եւ օրինակ իշխանութեան դէմ Դաշնակցութիւնը ձեւնարկել է հրապարակային պայքար։ Յիշեցնեմ բոլորին յայտնի հայ-թուրքական արձանագրութիւնների օրինակը։ Այն ժամանակ Դաշնակցութիւնը մէկ կողմից ճնշում գործադրելով, իսկ միւս կողմից քաղաքական պայքարը չհասցնելով ներքին թշնամանքի փորձեց իշխանութիւնը համոզել ու ստիպել, որ ետ կանգնի թուրքերի հետ «հաշտութեան» սայթաքուն ճանապարհից։ Որքան էլ զարմանալի կարող է թուալ, բայց այդ պայմաններում Հայաստանի թիւ մէկ պաշտօնեան որոշեց չրջագայել Սփիւռքում եւ համազգային կարեւորութեան հարցի վերաբերեալ լսել նաեւ սփիւռքահայութեան տեսակէտը։

Հաւանաբար նա հրաշալի պատկերացնում էր, թէ ինչ է լսելու Սփիւռքում, ուր իրեն դիմաւորողների մի ակտիւ հատուածը դարձեալ դաշնակցականներն էին լինելու։ Սփիւռքը իր քաղաքական եւ այլ բազմազանութեամբ նոյնպէս եղաւ կոչտ, բայց ոչ թշնամական։ Այդպէս հայ ժողովուրդը հայոց քաղաքական-պետական ուժերի հետ ձեւաւորում էր համազգային եւ ներպետական քաղաքական հանդուրժողութեան մշակոյթ՝ անկախ նրանից, թէ կողմերը ինչ տեսակէտ կ'ունենային միմեանց նկատմամբ, ինչն այսօր յաջողութեամբ փլուզում է Նիկոլ Փաշինեանը։ Ի դէպ, եթէ այդ մշակոյթը արմատներ նետած չլիներ մեր երկրում չէր լինի նաեւ Նիկոլի թաւիշը, որովհետեւ այն ոչ թէ պայմանաւորուած էր ընդդիմութեան, այլ իշխանութիւնների հանդուրժողութեամբ՝ «յեղափոխականները» չէին յարձակելու ուժայինների վրայ։ Իսկ թէ Փաշինեանի պատկերացումներն ինչ էին ներքաղաքական-ներհասարակական փոխյարաբերութիւնների վերաբերեալ այսօր ակնյայտ է ներհայկական պառակտուածութեան եւ թշնամանքի, համատարած քրէական հետապնդումների, վախի սերմանման, ուժայինների բիրտ գործողութիւնների, օրէնքներից ոտնահարման, մատնութիւնների եւ ընդհանրապէս քաղաքական ընդդիմութեան յայտ ներկայացնողների դէմ քրէական, քաղաքական ու ամբոխային տոտալ յարձակում ձեռնարկելու մշակոյթի սերմանման պայմաններում։

Ինչ վերաբերում է 20 տարի երկիրը կառավարած իշխանութիւնների նկատմամբ Դաշնակցութեան վերաբերմունքին, ապա այս հարցում ՀՅԴ քննադատներին խորհուրդ կու տամ բացել այդ տարիների ցանկացած օրուայ թերթերը եւ նրանք դժուար թէ դրանցում քննադատութիւններ չգտնեն գործող իշխանութիւնների հասցէին։ Համացանցում չատ տարածուած են երջանկայիշատակ Վահան Յովհաննիսեանի կոչտ եւ էլոյթները ներկայացնող տեսանիւթեր։ Այդ բոլոր տեսանիւթերը որ Լեւոն Տէր-Պետրոսեանի իշխանութեան խանութիւնների, մեր կարծիքով պետականաքանդ գործունէութեան նկատմամբ։ Այսինքն, այս գործընթացները Դաշնակցութեան դիրքերը թուլացնելու համար փորձ է արւում հարուածել նրան նաեւ կողքից ու թիկունքից, փորձել վարկաբեկել եւ ժողովրդին վանել ազգային խնդիրներով գործնականօրէն մտահոգ կուսակցութիւնից։

Արդէն երկու տարի նոր ուժերը իշխանութեան լիակատար տնօրինողներն են երկրում։ Այս ընթացքում ոչ միայն խոստացուած բարեփոխումների հետքերը չկան, այլեւ ստեղծուած չեն այնպիսի հիմքեր ու նախադրեալներ, որոնք գոնէ յուսալի ապագայի ակնկալիքներ կարող էին ներշնչել։ Դրա փոխարէն ոչ պալատական տնտեսագէտներն ու այլ մասնագէտները մռայլ կանխատեսումներ են կատարում մօտակայ հեռանկարի հետ կապուած։ Սրան զուգահեռ խայտառակ, եթէ չասենք ողբերգական իրավիճակ է համաճարակը յաղթահարելու ճակատում։ Այս ամէնին ինչպէ՞ս է արձագանգում իշխանութիւնը՝ հարձակումներով ընդդիմութեան դէմ, նոր դատավարութիւններով ու քրէական բնոյթի աղմկոտ մեղադրանքներով եւ հնի սաստկացող քննադատութեամբ։ Ուզած, թէ չուզած մարդիկ մէկ համեմատութիւններն են զուգահեռւում, ինչպէս անցած դարի 20ականներին, երեսունականներին եւ նոյնիսկ դրանից յետոյ խորհրդային միութիւնում ոչնչացւում էր պետական-պաշտօնական գծին չհամապատասխանող ամէն ինչ։ Հնի «յանցաւոր էութեան ու գործունէութեան» բացայայտման եւ հետապնդման մոլուցքով առաջնորդուել են մշտապէս նրանք, ովքեր ունակ չեն եղել լաւ բան անելու ժողովրդի համար, բայց հիւանդացած են եղել անսանձ ու անվերահսկել իշխանութեան տիրանալու մոլագարութեամբ։

Ուրեմն խորքում այլ խնդիր է։ Խորքում Հայաստանում տարածուած, բայց բարեբախտաբար, արագօրէն յաղթահարուող այն համաճարակն է, որը կարելի է անուանել նիկոլապաշտութիւն։ Զարմանալիօրէն ժողովրդավարութիւնից ու այլ մեծամեծ արժէքներից դատողները ընդօրինակում եւ խրախուսում են ամէն տեսակ քննադատութիւնը բոլորի հասցէին միայն ոչ Նիկոլ Փաշինեանի։ Նիկոլ Փաշինեանի հեղինակութիւնը կեսարի կնոջ պէս կասկածից վեր է։ Եւ չկասկածեք՝ Հայաստանում ինքն իրեն հաստատել փորձող ճորտութեան ու բռնիչխանութեան ներուժը վառ ընդունակութիւններից գուրկ Նիկոլ անձինը չէ, այլ պետական հաստատութիւնները նուաճած, համացանցային հարթութիւնում մի կողմից թշնամանք ու միւս կողմից պաշտամունք սերմանող մոլեռանդ կռապաշտների նօսրացող բանակինը։

Դաշնակցութեան համագործակցութեան որակը նորանկախ Հայաստանի այս կամ այն իշխանութեան հետ չափել կարող է միայն ի շահ երկրի ու պետականութեան իրականացուած աշխատանքի արդիւնաւէտութեամբ, ինչպէս եւ նրանով, թէ կուսակցութիւնը որքանով է կարողացել պահպանել ինքնուրոյնութիւնը։ Կարող է գնահատուել նրանով, թէ տուեալ շրջանում երկրում զարգացման ինչպիսի գործընթացներ են տեղի ունեցել, որոնց մասնակիցն է իր չափով եղել Դաշնակցութիւնը։ Իսկ ամպի պէս հաւաքուող ամբոխի այն ծուէնները, որոնք կարծում են, թէ Փաշինեանի թուարկութիւնից առաջ ամէն ինչ սեւ է եղել, իսկ նոր թուարկութեան հետ ամէն ինչ գարձել է վարդագոյն գուցէ դեռ նոր փորձութիւնների կարիք ունեն։ Յամենայն դէպս հասարակական թէ քաղաքական երկխօսութիւն հնարաւոր է նրանց հետ, ում առաջնորդում են ոչ թէ կոյր ատելութիւնն ու նոյնքան կոյր սէրը, այլ առողջ բանականութիւնը։ Ոչ թէ օդ արձակուող պղպջակների պէս սուտ խոստումները, այլ այն իրականութիւնը, որն աչքի առջեւ է եւ ամէն օր զգում ես սեփական մաշկի վրայ։

Արտաշէս Ծահիլազեան

ԴԱՏ... Սկիզբը էջ1

ծումին ուղղութեամբ «հայկական լոպի»-ին յառաջխաղացքը։ Հարաւային Կովկասի մէջ Թուրքիա դարձած է աւելի ռազմատենչ՝ հետեւողականօրէն բարձրացնելով լարուածութիւնը, ձգտելով ահաբեկել Հայաստանն ու Արցախը՝ ուղղակիօրէն ու անուղղակիօրէն՝ Ազրպէյճանի յարձակումներուն աւելի մեծ աջակցութիւն ցուցաբերելով եւ պատմական հայկական Նախիջեւանը առաւել ռազմականացնելով։ Ընդհանուր առմամբ, Թուրքիան ընդարձակած է իր ապակայունացնող գործողութիւնները ամբողջ Մերձին Արեւելքի եւ Հիւսիսային Ափրիկէի մէջ։

Վերջին երեք տասնամեակներուն իրավիճակը այնպիսին է, որ Անգարայի կողմէ իւրաքանչիւր հակահայ սրացումի Պաքուն համապատասխան անդրադարձ կ'ունենայ իր յարձակողական քաղաքականութեամբ՝ սահմանային գրոհներով, զինադադարի խախտումներով, մարդկային իրաւանց ոտնահարումով, պատմական կեղծիքներով ու ատելութեան հրահրումներով, որոնք վերջին շաբաթներուն դատապարտուեցան Մարդկային իրաւանց եւրոպական դատարանին կողմէ։

ՀՅԴ Հայ դատի կեդրոնական խորհուրդը, համագործակցաբար աշխարհասփիւռ իր ցանցին եւ համախոհ գործընկերներու, կը շարունակէ ուշադրութեամբ հետեւիլ այս սադրանքներուն եւ անկասելի մնալ իր հիմնական առաքելութեան իրականացման մէջ՝ Հայաստանի եւ Արցախի հանրապետութիւններու ապահովութեան պահպանութիւն, աշխարհասփիւռ հայութեան չահերու պաշտպանութիւն եւ ազատ, անկախ ու միացեալ Հայաստանի իրականացման հետապնդում։

ՀՅԴ ՀԱՅ ԴԱՏԻ ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ
Երեւան, 23 յունիս 2020

www.horizonweekly.ca

ՈՒՍԱՀՈՐԻՉ

ԿԵՂԵՑԻՆ ՏԱՆ ՄԷՋ

Գ. ՏԱՐԻ, Թիւ 8, Յուլիս 2020

ԳԱՆԱՏԱՅԻ ՀԱՅՈՑ ԹԵՄԻ ԱՋԳԱՅԻՆ ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆԻ ԿՐՕՆԱԿԱՆ ԱՄՍԱԹԵՐԹ

ԱՌԱՋՆՈՐԴԻ ԽՕՍՔ

ԹԱՂԵԼ ՀԻՆ ՄԱՐԴԸ

Պօղոս առաքեալ փիլիպեցիներուն ուղղած իր նամակին 3-րդ գլխուն մէջ կը բացատրէ թէ ինչպէս ատենին նախանձախնդիր եղած է օրէնքի հնազանդութեան մէջ: Որոշ ժամանակ օրէնքի գործադրութիւնը առաւելութիւն սեպած և անոր համար հալածանքներ կազմակերպած է Քրիստոսի եկեղեցւոյ դէմ: Իսկ այժմ կը բացատրէ, որ ինք անցեալին սխալած և կորուստի մատնուած է, ու այսօր՝ ամենամեծ շահը և օգուտը Քրիստոսի իսկական ճանաչողութեան մէջ կը տեսնէ: Առաքեալը կը յորդորէ նաև շահիլ Քրիստոսը և միանալ Անոր, որովհետև փրկութեան հասնելու միակ ճանապարհը՝ Յիսուս Քրիստոսի ճանապարհն է:

Պօղոս առաքեալ դարձեալ կը բացատրէ, որ օրէնքէն, այսինքն՝ օրէնքի հնազանդութենէն եկող արդարութիւնը իսկական ու վաւերական արդարութիւնը չէ: Առաքեալը կ'ուզէ Քրիստոսի արդարութիւնը ստանալ միայն, որ Աստուծմէ կու գայ: Աստուծոյ պարգևն է ան, շնորհքն է, տրուած մարդուն՝ հիմնուած հաւատքի վրայ:

Հետևաբար, առաքեալը կ'եզրակացնէ իր խօսքը ըսելով, որ իր միակ փափաքն է՝ ***ՁԱՆԶՆԱԼ ՔՐԻՍՏՈՍԸ*** և մասնակցիլ անոր չարչարանքներուն, մէկ խօսքով՝ ան կ'ուզէ՝ ***«հին, մեղաւոր մարդը»*** թաղել և յոյս ունենալ Քրիստոսի հետ յարութիւն առնելու, այսինքն՝ դառնալու նոր մարդ՝ մաքրուած և սրբուած բոլոր աղտեղութիւններէն և չարութիւններէն, մէկ խօսքով՝ բոլոր տեսակի մեղքերէ:

Այսօր, որքանո՞վ պատրաստ ենք իսկապէս ճանչնալու մեր Տէրը Յիսուս Քրիստոսը: Այսօր, որքանո՞վ պատրաստ ենք օրէնքէն անդին՝ հաւատքով և ամբողջական վստահութեամբ մօտենալու Քրիստոսին, մասնակից դառնալու Անոր չարչարանքներուն, և թաղելով մեր անցեալը, հին մեղաւոր բնութիւնը, դառնալու նոր մարդ, նոր արարած, պատրաստ մեր կեանքը տալու, մեր կեանքը ընծայաբերելու յանուն Քրիստոսի և արժանանալու յարութեան:

Կարևորը այն է, որ մենք ձգտումը ունենանք և փորձենք հասնիլ սրբութեան և կատարելութեան: Երբէ՛ք չնայինք անցեալին, այլ նայինք գալիքին, կատարեալին: Չնայի՛նք մեր սխալներուն և մեղքերուն, այլ նայինք վաղուան, վազենք առաջ՝ Քրիստոսի նմանելու, որովհետև քրիստոնեայ անհատի կեանքը մրցավազք մըն է և մենք պէտք է վազենք՝ շահելու մրցանակը: Այդ մրցանակով կը շահինք Քրիստոսի հետ ժառանգակից դառնալու պատիւը և Անոր փառքին մասնակից դառնալու ուրախութիւնը:

Այս բոլորը ընելու համար միակ ճանապարհը՝ ***«Հին, մեղաւոր մարդը»*** պէտք է թաղենք ու գերեզմանենք, դառնալու նոր մարդ մը՝ սրբացած ու մաքրուած ամէն տեսակ մեղքերէ:

Բաբգէն Արքեպիսկոպոս

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ

Քրիստոնեան պէտք է նպաստէ ընդհանուրի շահին, այնքան՝ որքան կը ներեն իր կարողութիւնները:

Պէտք է օգնէ իր դրացիին ապահովելու համար անոր կարիքները, ըլլան անոնք ուտեստեղէն, հագուստ և բնակարան, որպէսզի ան կարողանայ պատուաւոր կեանք մը ապրիլ:

Պէտք է կազմէ երջանիկ և օրինակելի ընտանիք մը, որպէսզի իր բարեկիրթ զաւակներով բարիք ապահովէ ընկերութեան:

Պէտք է հոգածու ըլլայ հոգևոր և մտաւոր կրթութեան: Ասոնք բացարձակ անհրաժեշտութիւններ են կարենալ պատուաբեր և ազատ կեանք մը ապրելու: Քրիստոնեային կեանքն ու գործը պէտք է հիմնուած ըլլայ սիրոյ և արդարութեան վրայ, որոնք ընդհանրական շահը պաշտպանող մեծագոյն առաքինութիւններն են:

Քրիստոնեայ անհատը եթէ ի սկզբանէ պատրաստ չըլլայ նման կեանքի մը, ապա պարտադրանքի կը վերածուի ամէն տեսակի գործ և պատասխանատուութիւն: Այս իսկ պատճառով, անհրաժեշտ է ուշադրութեամբ հետևիլ Քրիստոսի ցուցմունքներուն և ուսուցումներուն:

«Աստուածաշունչին Վերաբերեալ Ուսումնասիրութիւններ»

ԱՍՏՈՒԱԾԱՇՈՒՆՉԸ՝

ՔՐԻՍՏՈՍԻ ՎԿԱՅՈՒԹԻՒՆՆ ՈՒ ՆԵՐԿԱՅՈՒԹԻՒՆՆ Է

Աստուածաշունչը մէկ ծայրէն միւսը կը պատմէ մեր Տիրոջ՝ Յիսուս Քրիստոսի մասին: Երևութապէս այնպէս կը թուի, թէ միայն Նոր Կտակարանն է Յիսուսի մասին խօսողը, բայց իրականին մէջ Հին Կտակարանը նոյնքան կը խօսի Քրիստոսի մասին: Թէպէտ ո՛չ բացայայտ կերպով, բայց անիկա տարբեր կերպերով կը նախապատկերացնէ մեր Տէրը, կը ներկայացնէ զայն իր փրկագործական պաշտօններով և ապագայ երկրաւոր առաքելութեամբը:

Յիշենք, թէ ինչպէս Յիսուս իր հետ վիճող Հրեայ կրօնական իշխանաւորներուն կ՚ըսէր. ***«Քննեցէ՛ք Սուրբ Գիրքերը, քանի կը կարծէք թէ անոնցմով յաւիտենական կեանք պիտի ունենաք. և նոյն գիրքերն են որ կը վկայեն իմ մասիս»*** (Յհ5.39): Իսկ իր յարութենէն ետք երբ եկաւ վերնատուն, բացաւ աշակերտներուն միտքը, որպէսզի կարենան տեսնել թէ ինչ որ գրուած է Հին Կտակարանին մէջ՝ ի՛ր մասին է որ գրուած է. ***«Այս բոլորը ձեզի ըսած էի արդէն, երբ ձեզի հետ էի, թէ պէտք էր որ իրականանային Մովսէսի Օրէնքի գիրքին, մարգարէական գիրքերուն և Սաղմոսներուն մէջ իմ մասիս գրուածները»*** (Ղկ 24.44: Հմմտ հմր 25-27):

Տակաւին, Աստուածաշունչը ո՛չ միայն Քրիստոսի մասին կը պատմէ, այլ ինք Քրիստոսի կողմէ տրուած յայտնութիւնն է, և լեցուն է Քրիստոսի ներկայութեամբ: Անիկա ամբողջութեամբ կը նոյնանայ Քրիստոսի հետ: Եւ ինչպէս որ Քրիստոս Աստուծոյ մարմնացեալ **Խօսքն** է (= Բան)ը, այնպէս ալ Աստուածաշունչը Աստուծոյ մարմնացեալ խօսքն է, թանձրացած և արձանագրուած, իր բնական՝ մարդկային և գերբնական՝ աստուածային տարրերով, ճիշդ Քրիստոսի Աստուածամարդկային միացեալ բնութեան պէս:

ԱՍՏՈՒԾՈՅ ԱՐՔԱՅՈՒԹԵԱՆ ՊԱՏԿԵՐԱՑՈՒՄԸ ԵՒ ԱՆՈՐ ԼՐՄԱՆ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՈՒՄՆ Է

Աստուածաշունչը կը բացուի ու կը փակուի Աստուծոյ թագաւորութեան պատկերացումով: Առաջին՝ Ծնունդներու գիրքը կը բացուի Աստուծոյ թագաւորական վեհափառ իշխանութիւնը պատկերացնելով ամբողջ ստեղծագործութեան վրայ, տիեզերքին, մեր աշխարհին, բնութեան, կենդանիներուն և մարդ արարածին վրայ:

Աստուածաշունչը կը յորդի այդ թագաւորութեան վկայութիւններովը: Աստուած ***«Յաւիտեանս յաւիտենից թագաւոր»ն է*** (Սղ 10.16: Եր 10.10: Ա.Տմ 1.17 ևլն), ***«Փառաց թագաւոր»ը*** (Սղ 24.7 և 10), ևլն, ***«Մեծ թագաւոր»ը*** (Սղ 95.3): ***«Ամբողջ աշխարհի վրայ մեծ թագաւոր»ը*** (Սղ 47.2 և 7), ***«Թագաւորներու թագաւոր»ը*** (Դն 2.47: Յյտ 6.15), թուելու համար միայն քանի մը վկայութիւններ:

Բայց Տէրը միայն **«Երկինքի թագաւորը»** չէ (Դն 4.37): Այդ թագաւորութիւնը յատուկ կերպով կապուած է ներկայ ժամանակին, մեր աշխարհին, և երկրի վրայ իր երկնային կոչումը իրագործող Աստուծոյ ժողովուրդին:

Աստուծոյ ժողովուրդը այդ թագաւորութիւնը ճանչցող և զայն իր կեանքին մէջ արտայայտող առանձնաշնորհեալ հպատակներու ամբողջութիւնն է, որ Աստուծոյ թագաւորութիւնը կը հոչակէ ու կը ներբողէ, ըսելով. ***«Տէրն է մեր թագաւորը»*** (Ես 33.22):

Հին Կտակարանին մէջ եթէ այդ ժողովուրդը ժամանակաւորապէս Եբրայեցի ժողովուրդն էր, Աստուածաշունչը ցոյց կու տայ, որ Աստուծոյ իսկական նպատակը նո՛ր ժողովուրդի մը կերտումն էր՝ աշխարհի բոլոր ազգերէն ու լեզուներէն: Նոր ժողովուրդ մը, Աստուծոյ Սուրբ Եկեղեցին, որ Քրիստոս իր արիւնով պիտի գնէր և իր սեփական մարմինը դարձնէր (հմմտ Եփ 5.25), իր անձին մէջ զայն կապելու համար Աստուծոյ և Աստուծոյ փրկեալներուն թագաւորութիւնը դարձնելու համար:

ԶԱՐԵՀ ԱՐՔ. ԱԶՆԱՒՈՐԵԱՆ

ԱՅԼԱԿԵՐՊՈՒԹԵԱՆ ՃԱՆԱՊԱՐՀՈՎ

ՔՐԻՍՏՈՍԻ ԱՅԼԱԿԵՐՊՈՒԹԻՒՆԸ

Հայաստանեայց Առաքելական Ս. Եկեղեցւոյ հինգ Տաղաւար տօներէն երրորդը կը կոչուի Այլակերպութիւն կամ Պայծառակերպութիւն, ժողովրդային անուանումով՝ Վարդավառ:

Առաջին երեք Աւետարանները, որոնք համատեսական կը կոչուին, մեր Տիրոջ և Փրկիչին այլակերպութիւնը կը նկարագրեն հետևեալ ձևով.-

Յիսուս իր հետ առնելով առաքեալներէն Պետրոսը, Յակոբոսը և Յովհաննէսը, լեռ կը բարձրանայ աղօթելու: Մինչ կ'աղօթէր, Անոր դէմքը արևու նման կը լուսաւորուի, իսկ զգեստները հրեղէն լոյսի նման սպիտակ կ'ըլլան: Յիսուսի երկու կողմերը կը յայտնուին հին կտակարանի մեծագոյն մարգարէներէն երկուքը. առաջինը՝ Մովսէս, որ կը խորհրդանշէ ***օրէնքի մարգարէութիւնը***, իսկ երկրորդը՝ Եղիան, որ կը խորհրդանշէ ***հաւատքի մարգարէութիւնը***: Զոյգ մարգարէները Քրիստոսի հետ կը խօսին Անոր չարչարանքներուն, խաչելութեան, մահուան և յարութեան մասին:

Պետրոս, այս հրաշալի տեսարանի գեղեցկութենէն զմայլած, Յիսուսի կ'առաջարկէ ըսելով.- ***«Վարդապե՛տ, լաւ է որ հոս մնանք. երեք վրաններ շինենք մին Քեզի, մէկը Մովսէսին և միւսը Եղիային համար»*** (ՂԿ. 9:35): Մինչ Պետրոս կը խօսէր, ահա լուսաւոր ամպ մը կը ծածկէ զիրենք. ամպին մէջէն ձայն մը կը լսուի, որ կ'ըսէր.- ***«Այս է իմ սիրելի Որդիս, որուն ես հաճեցայ, անոր մի՛կ ըրէ՛ք»*** (Մտ.17:1-6):

Այլակերպութեան տօնը Քրիստոսի աստուածային փառքին յայտնութեան յիշատակն է, երբ Ան առաջին անգամ ըլլալով ինքզինք ցոյց տուաւ որպէս Աստուած՝ Տէր ողջերու և մեռեալներու:

Սուրբ Գրիգոր Նարեկացի Վարդավառ բառը կը մեկնաբանէ հետևեալ ձևով.- ***«Ինչպէս վարդի մը կոկոնը բացուելով ցոյց կու տայ վարդին ողջ գեղեցկութիւնը և բոյրը, նոյնպէս ալ Քրիստոսի Պայծառակերպութեամբ մեր առջև բացայայտուեցաւ Աստուծոյ Որդիի Աստուածութիւնը և ողջ փառքը»***:

Մեր Տէրը Յիսուս Քրիստոս իր երկրաւոր առաքելութեան ընթացքին առիթներն ու միջոցները կը ծառայեցնէր փրկագործութեան բարի լուրը աւետելու և ***«Երկնքի Արքայութեան մարգարիտները»*** երկիր փոխադրելու նպատակին: Նոյնպէս և այլակերպութեան դէպքը՝ Քրիստոսի լուսաւոր և պայծառակերպուած դիմագիծի ընդմէջէն մեր ուշադրութեան կը յանձնէ ու կը յիշեցնէ ***մարդկութեան վայելչութիւնն ու գեղեցկութիւնը հանդերձեալ կեանքին մէջ***:

Այլակերպութիւնը նաև կը խորհրդանշէ մարդկութեան երանելի վիճակը յաւիտենականութեան մէջ, և կը յիշեցնէ Քրիստոսի մարդեղութեան խորհուրդին հիմնական նպատակը, որ կը միտի անկեալ մարդը վերականգնել և անոր վերադարձնել աստուածային այն շնորհքները, որ նախամարդուն անհնազանդ ընթացքով կորսուած էր:

Քրիստոսի այլակերպութիւնը մարդկային բնութեան նախապատկերացումն է, որ պիտի հաստատուի Քրիստոսի երկրորդ գալուստով՝ երբ փառաւորեալ մարմիններով յարութիւն առնենք:

Մեր Տիրոջ Յիսուս Քրիստոսի այլակերպութիւնը տիեզերական վախճանական իմաստ ունի նաև, ***ազատագրելու ամբողջ մարդկութիւնը, որ ենթակայ է մեղքի և ապականութեան, զորս այլակերպութեան խորհուրդով պիտի ազատագրուի ու վերանորոգուի, երբ Քրիստոս «իր փառքով» յայտնուի***:

Քրիստոսի այլակերպութիւնը իր խոր տպաւորութիւնն ու ազդու ներգործութիւնը ունեցաւ առաքեալներուն և համայն մարդկութեան վրայ: Պետրոս առաքեալ իր ականատեսի վկայութեամբ կ'ըսէ.- ***«Անձամբ ականատես եղանք Անոր մեծութեան, երբ Անիկա փառք և պատիւ ստացաւ Հօր Աստուծմէ, որ իր մեծավայելուչ և փառաւոր ձայնով Անոր համար վկայեց, ըսելով-. «Ասիկա է իմ սիրելի Որդիս, որուն ես հաճեցայ»*** (Բ.Պտ 1:16-17):

Այլակերպուած աշխարհի Լոյսին՝ Քրիստոսին մօտենալով լուսաւորուինք և դառնանք Լոյսի որդիներ և Աստուծոյ թագաւորութեան ժառանգորդներ:

Տաթև Աւ. Քահանայ Միքայէլեան

ՏՕՆ՝ Ս. ՏՐԴԱՏ ԹԱԳԱՒՈՐԻ, ԱՇԽԷՆ ԹԱԳՈՒՀԻՒ ԵՒ ԽՈՍՐՈՎԻԴՈՒԽՏ ԿՈՅՍԻ

Արշակունեաց Ս. Տրդատ թագաւորին անունը անմիջականօրէն կապուած է Հայաստանի մէջ քրիստոնէութեան պետականացման և տարածման գործին հետ, 301 թուականին:

Ան թագաւորեց 287 թուականէն մինչև 330 թուական և մահացաւ 90 տարեկանին:

Հեթանոսական կիրքերով լեցուն Թագաւորը Ս. Գրիգոր Լուսաւորիչ Հայրապետի օգնութեամբ դուրս եկաւ շուայտ վարքէն և դարձաւ քրիստոնէութեան մեծագոյն ջատագովը, իր կողքին ունենալով իր քոյրը՝ Խոսրովիդուխտ կոյսն ու կինը՝ Աշխէն թագուհին:

Այսպիսով, Ս. Տրդատին և անոր ընտանիքին օժանդակութեամբ, Հայաստանի բոլոր բագիններն ու մեհեանները կործանեցան և անոնց տեղ եկեղեցիներ կառուցուեցան: Քրիստոնէութիւն ամէնուրէք տարածուեցաւ Հայաստանի մէջ:

Ագաթանգեղոսի վկայութեամբ, եկեղեցիներու շինութեան մէջ Տրդատ անձամբ կ'աշխատէր և Մասիսի բարձունքէն ութը խոշոր ծանր և անտաշ քարեր իր ուսին բեռցնելով եկեղեցիներուն մօտ կը բերէր գործածելու համար:

«ԵԿԵՂԵՑԻՆ ՏԱՆ ՄԷՋ»

Գանատայի Հայոց Թեմի Ազգային Առաջնորդարանի Կրօնական Յայտագիր

Իւրաքանչիւր ամիս հետեւեցէք մեր յայտագիրին
ընկերային ցանցերու եւ youtube -ի մեր էջերուն միջոցաւ

Armenian Prelacy of Canada

ՄԱՆԿԱՊԱՏԱՆԵԿԱՆ

Օր մը Յիսուս պատմեց, թէ ինչպէս հովիւ մը իր ոչխարներէն մէկը կորսնցուց:
Ահա առակը կրնաս կարդալ Ղուկաս (15. 4-7) համարներուն մէջ
Գտի՛ր կորսուած ոչխարը:



Ազգային Առաջնորդարան
Armenian Prelacy of Canada
Prelature Armenienne du Canada

514-856-1200
prelacy@armenianprelacy.ca
www.armenianprelacy.ca

Խմբագիր՝ Քրիստափոր Միքայէլեան
3401 Olivar Asselin
Montreal, Quebec H4J 1L5

horizon
ARMENIAN WEEKLY
VOL. 26 No. 6-7 (1287-8) JULY 6-13, 2020

Canadian Committee for the relief of Armenians in Lebanon

COMMUNIQUÉ # 2

Dear compatriots,

On May 28, 2020 was launched our fundraising drive for the relief of the Armenians in Lebanon, through which the Armenian community in Canada once more expressed its willingness to extend a helping hand to wherever the call for help originates. In our previous communiqué, we had pledged to keep our community informed about our subsequent actions and projects. Following is a list of actions and events:

1 — On Thursday, July 9, from 8:30pm to 10:00pm, will be held the *Aid4Lebanon* telethon, which will be broadcasted live on the following sites:

Facebook.com/Aid4Lebanon
icitelevision.ca/live-video/

2 — The Facebook page and Instagram account of *Aid for Lebanon* are up and running. There you can follow our activities, Lebanon news, as well as the actions of our Lebanese organizations.

3 — The online donations address *https://acc.akaraisin.com/Aid4Lebanon* is temporarely suspended. We will soon publish another online address where you will be able to make your donations and receive your official receipts for tax purposes.

4 — You can always make your donations by check, payable to **C.A.M.A.M** and mail them to the following address:

C.A.M.A.M
3401 Rue Olivar-Asselin
Montreal, QC
H4J 1L5

For further details, please call the following numbers:

Montreal — (514) 887-6547
Laval — (514) 887-1890
Ottawa — (819) 743-0386
Toronto — (416) 315-7310
Southern Ontario — (519) 241-1477
Vancouver — (778) 228-1233

Or write to *aid4lebanon@armenian.ca*

We ask from our compatriots to share these informations on their social networks, in order to make this appeal accessible throughout Canada.

